ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի հուլիսի 1 -ի, թիվ 252- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԵՎՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 437-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով, 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 2.2 կետի պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի «Արևուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Արևուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի N 437-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/1/2026 16:17:02 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890437

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք.Աշտարակ